«ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ՀՀ Արմավիրի մարզ ք. Մեծամոր Հեռ./0237/ 3-34-34 էլ.փոստ-mmc_am@mail.ru

«24» «12» 2024 թ. № 487

«ԱԳԱՍՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Մեծամոր ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Պատվիրատու) և «Ագաստ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև Մատակարար) միջև 02.02.2024թ.-ին կնքվել է թիվ ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/01-4 պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր), որի թիվ 74 չափաբաժնի շրջանակներում Մատակարարը պետք է մատակարարի Հակափայտացման Անատոկսին:

Սույն թվականի ապրիլի 3-ին մատակարարվել է 30 հատ Հակափայտացման Անատոկսին և մինչ օրս չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է պայմանագիրը. Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մատակարարի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիարատուն միակողմանի հրաժարվում է 2024 թվականի փետրվարի 2-ին կնքված թիվ ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/01-4 պայմանագրի 74 չափաբաժնի մասով՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Մ.Գ.ՎԱՆՅԱՆ